11-րդ դարում։ Նրան ծանոթ ամենահին օրինակը Հոռոմոսի վանքի ս. Հովհաննես եկեղեցու գավիթն է, որ ըստ արձանագրության կառուցված է 1038 թվականին Բագրատունի Հովհաննես Սմբատ թագավորի ձեռքով[1]։

Հայոց միջնադարյան գավիթներն ու ժամատները հատուկ ուսումնասիրության նյութ դարձրած ճարտարապետության թեկնածու Ստ. Մնացականյանը ծանոթ է գավթի ավելի հին օրինակի, Գնդեվանքի գավթին Սյունիքում, որ կառուցված է 996 թվականին։ Բայց, ինչպես հաղորդում է ինքը՝ ընկեր Ստ. Մնացականյանը, այդ, ինչպես նաև մյուս հին գավիթները (Քարկոփում, Վահանավանքում), ոչ թե հասարակական մեծ շինություններ են, այլ փոքրածավալ և դեռևս ճարտարապետական ուրույն ոճ չունեցող կառուցվածքներ[2]։

Ճարտ. Թ. Թորամանյանը գրում է, որ Հայոց եկեղեցիների հետ կապված՝ գավիթ բառը թեև շատ հին է, սակայն 10-րդ դարից առաջ այն նշանակությունը չուներ, ինչ որ 10-րդ դարից հետո։ Հնում գավիթ նշանակում էր եկեղեցու շուրջը պարփակող ընդարձակ բացօթյա շրջափակ[3]։

Սանահնի հնագույն գավիթը բացօթյա տարածություն չի եղել։ Նրա դմբեթից Կյուրիկե առաջինը մի չափավոր ջահ է կախել և ճարտ. Մնացականյանի նկարագրած փոքրիկ կառուցվածքը չի, այլ մեծ դահլիճ, հասարակական շինություն, որ միաժամանակ ծառայել է վանքի երկու գլխավոր եկեղեցիներին։

Ճիշտ է Թորամանյանի այն եզրակացությունը, որ գավիթների հանրածանոթ ձևը զուտ հայկական ստեղծագործություն է, բոլորովին տարբեր արևմտյան եկեղեցիների porche կամ nartex կոչվող եկեղեցիներին կից շինություններից, բայց սխալ է այն տեսակետը, որ իբր թե այդ զուտ հայկական երևույթը ծագում է առել ոչ թե բուն Հայաստանում, այլ Կիլիկիայի կամ Փոքր Ասիայի հայերի մեջ և կամաց-կամաց տարածվելով հասել է Արևելյան Հայաստան, հավանորեն 11-րդ դարից առաջ։

Թորամանյանը կարծում է, որ Հոռոմոսի նախասրահը, որ կառուցված է Հովհաննես Սմբատի ձեռքով, այն էլ եկեղեցին շինելուց հետո, գավիթների հնագույն օրինակներից մեկն է և Բագրատունի թագավորների ժամանակ այդ սովորությունը գոյություն չի ունեցել[4]։ Նրան թյուրիմացության մեջ է գցել Ներսես Լամբրոնացու «Մեկնութիւն ս. Պատարագին» գրքի մեջ եղած մի հատվածը, որտեղ ասված է՝

«Ցարձանացեալ խորանացն որք կան մինչև ցայսօր հաստատուն, և ոչ ունին առընթեր ժամատուն... և թագաւորքն Բագրատունեաց, և որ առ նոքօք հայրապետք ընդ նոյն գնացին շաւիղ՝ եկեղեցիս միայն շինեալ տունս աղօթից» (էջ 26)։

Ճարտարապետական տեսակետով այնպիսի խոշոր երևույթ, ինչպիսին էր միջին դարերում եկեղեցիներին կից ժամատուն շինելը, պարզ է, որ չէր կարող բուն Հայաստանից անկախ Փոքր Ասիայում կամ թեկուզ Կիլիկյան Հայաստանում առաջ գալ և հետզհետե տարածվելով հասնել Արևելյան Հայաստան, այն էլ այն ժամանակ, երբ Կիլիկիայում հայկական ճարտարապետությունը դեռևս չէր էլ հիմնադրվել և հիմնադրվելուց հետո էլ, 11-րդ դարի վերջերքում հազիվ էր իր գոյությունը պահպանում և հետզհետե ընկնում էր օտար ազդեցությունների տակ։ Դրան հակառակ, Արևելյան Հայաստանում հենց Թորամանյանի ուսումնասիրությունների հիման վրա կարելի է պնդել, որ հայկական ճարտարապետությունը աննախընթաց խոշոր վերելք էր ապրում Բագրատունյաց և Արծրունյաց թագավորությունների սահմաններում, 10 և 11-րդ դարերում։

Այդ միջոցներին էր, որ կառուցվեցին այնպիսի աշխարհահռչակ ճարտարապետական կոթողներ , ինչպիսիք են՝ Անիի մայր տաճարն իր երկնասլաց երկկենտրոն կամարներով, Հոռոմոսի, Սանահնի, Հաղբատի վանքերը, Աղթամարի տաճարը, Անիի պարիսպները, կամուրջներ, բերդեր, հյուրանոցներ և այլն։ Այդ ժամանակ էր, որ հայերն ունեցան Անիում և Վասպուրականում այն-

[1] Թ. Թորամանյան, Նյութեր հայկական ճարտարապետության պատմության, հատ. Ա, 1942, Երևան, էջ 156։

[2] С. Х. Мнацаканян, Архитектура армянских притворов, Ереван, 1952, էջ 10։

[3] Թ. Թորամանյան, հիշյալ աշխատությունը, էջ 163։

[4] Թ. Թորամանյան, նույն տեղում, էջ 156։